ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ, ՆՐԲԱՆՑՔՆԵՐ ԵՎ ՓԱԿՈՒՂԻՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Արաբկիր վարչական շրջանի.

1) Շրջանցիկ թունելի հ.19/1 հասցեից սկսվող և հ.01-003-0408-0195 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն (հ.01-003-0408-0046 կադաստրային ծածկագրով ճանապարհահատվածի մի մասը) անվանակոչել **Շրջանցիկ թունել փողոց, 1-ին փակուղի:**

2. Էրեբունի վարչական շրջանի.

1) Դավիթ Բեկի փողոցի հ.45 տան մոտից սկսվող և Գաջեգործների փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Դավիթ Բեկի փողոց, 1-ին նրբանցք**,

2) Երևանի Վրեժ Համբարձումյանի անվան հ.17 հիմնական դպրոցի մոտից սկսվող և Ռոստովյան փողոցի հ.27 հասցե հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Ազատամարտիկների պողոտա, 6-րդ նրբանցք**:

3.Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի.

1) Հաղթանակ թաղամասի 1-ի փողոցի 9-րդ նրբանցքից սկսվող և Հաղթանակ թաղամասի 2-րդ փողոցի 5-րդ նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Հաղթանակ թաղամաս, 1-ին փողոց, 13-րդ նրբանցք,**

2) Հաղթանակ թաղամասի 8-րդ փողոցի 1-ին նրբանցքից սկսվող և Հաղթանակ թաղամասի 8-րդ փողոցի 2-րդ նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Հաղթանակ թաղամաս, 8-րդ փողոց, 6-րդ նրբանցք:**

4. Նուբարաշեն վարչական շրջանի.

1) Նուբարաշենի 2-րդ փողոցից սկսվող և հ.01-010-0202-0001 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նուբարաշենի 2-րդ փողոց, 1-ին փակուղի:**

2) Նոր Զմյուռնիայի փողոցից սկսվող և Նուբարաշենի 11-րդ փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նուբարաշենի 21-րդ փողոց,**

3) Նուբարաշենի 17-րդ փողոցից սկսվող և հ.01-010-0167-0066 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նուբարաշենի 17-րդ փողոց, 1-ին նրբանցք,**

4) նախատեսվող Նուբարաշենի 21-րդ փողոցից սկսվող և նախատեսվող Նուբարաշենի 17-րդ փողոցի 1-ին նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նուբարաշենի 21-րդ փողոց, 1-ին նրբանցք,**

5) նախատեսվող Նուբարաշենի 21-րդ փողոցի միջնամասից սկսվող և հողածածկ տարածք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նուբարաշենի 21-րդ փողոց, 2-րդ նրբանցք,**

6) նախատեսվող Նուբարաշենի 21-րդ փողոցի միջնամասից սկսվող և հողածածկ տարածք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նուբարաշենի 21-րդ փողոց, 3-րդ նրբանցք,**

7) նախատեսվող Նուբարաշենի 21-րդ փողոցից սկսվող և հողածածկ տարածք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Նուբարաշենի 21-րդ փողոց, 4-րդ նրբանցք:**

5. Շենգավիթ վարչական շրջանի.

1) Արմեն Խոստիկյանի փողոցից սկսվող և Ներքին Շենգավիթի 13-րդ փողոց հասնող հատվածն անվանակոչել **Արմեն Խոստիկյան փողոց, 1-ին նրբանցք:**

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ, ՆՐԲԱՆՑՔՆԵՐ ԵՎ ՓԱԿՈՒՂԻՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի գրանցման համակարգի և հասցեների միասնական ռեեստրի տվյալների ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ՝ կապված ենթափողոցների անվանման և համարակալման հետ:

Բացի այդ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ կետի համաձայն՝ գույքերին հասցեներ տրամադրելու նպատակով Կադաստրի կոմիտե ուղարկվող համապատասխան հայտերը մերժվում են՝ պատճառաբանությամբ, որ ճանապարհահատվածները, որոնց կից գտնվում են գույքերն անհրաժեշտ է անվանակոչել և անվանակոչելուց հետո նոր անդրադառնալ հասցեավորման հարցին:

Երևան քաղաքի ավագանու 2023թ. մարտի 15-ի հ.742-Ն որոշմամբ Երևան քաղաքի Ներքին Շենգավիթի 12-րդ փողոցն անվանակոչվել է կինոյի, հեռուստատեսության և թատրոնի դերասան Արմեն Խոստիկյանի անվամբ: Ներքին Շենգավիթի 12-րդ փողոցն ունի նաև նրբանցք, սակայն որոշման մեջ չի նշվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել իրականացնել որոշ անվանակոչություններ և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ